ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«02» 10 2024թ.
No 01/6492

«ԳԵՎԳԵՎԻԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՒՇ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչի փ., 15/1,
պատճենը՝ ք. Երևան, Զաքարիա Քանաքեռցու փ., 126/1, 38,
էլ. փոստի հասցե՝ siransimonyan13@gmail.com)

Հարգելի՛ տիկին Սիմոնյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հոկտեմբերի 1-ի ««Գևգևիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02912/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 640-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Արմենուհի Թադևոսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (245)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 19 նոյեմբերի 2024 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 հոկտեմբերի 2024 թվականի թիվ 640-Ա

«ԳԵՎԳԵՎԻԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-02912/24 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հոկտեմբերի 1-ի նիստում, քննարկելով «Գևգևիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-02912/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 2-ի ««Գևգևիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 365-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 365-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02912/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցված է «մանկական զարգացման և խնամքի կենտրոն», «մանկան ժամանցի և խնամքի կենտրոն» և «նախակրթարան» բառերի օգտագործմամբ գործունեություն իրականացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերությունը թիվ 365-Ա որոշումը իրավաբանական հասցեով չի ստացել, և այն վերադարձվել է:

Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 11-ին թիվ 365-Ա որոշումը հրապարակել է azdarar.am և competition.am կայքերում և այն համարվել է Ընկերությանը պատշաճ հանձված 2024 թվականի հուլիսի 16-ից: Բացի այդ, թիվ 365-Ա որոշումը ուղարկվել է Ընկերության տնօրենի հասցեով:

Ընկերությունը Վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ ՄՊՀ-011469 գրությամբ Ընկերությանն առաջարկվել է ներկայացնել գրավոր դիրքորոշում՝ Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) կողմից կազմված ««Գևգևիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02912/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**) առնչությամբ:

Հաշվի առնելով, որ Վարույթի ժամկետը լրանում է 2024 թվականի հոկտեմբերի 2-ին, իսկ Վարույթի շրջանակում առկա փաստական հանգամանքները, առկայության դեպքում Վարույթով պատասխանողի դիրքորոշումների հաշվառմամբ վերլուծելու, անհրաժեշտության դեպքում հավելյալ տեղեկատվություն ձեռքբերելու, ինչպես նաև Վարույթի շրջանակում գործի բազմակողմանի և լրիվ քննությանն ուղղված այլ գործողություններ կատարելու համար Վարույթի իրականացման՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ՝ Պատասխանատու ստորաբաժանումը 2024 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ ՄՊՀ-011488 զեկուցագրով, ի թիվս այլնի, առաջարկել է Վարույթի ժամկետը 2024 թվականի հոկտեմբերի 2-ից եռամսյա ժամկետով երկարաձգել:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2024 թվականի հոկտեմբերի 2-ից եռամսյա ժամկետով երկարաձգել «Գևգևիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02912/24 վարույթի ժամկետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2024 թ. հոկտեմբերի 1
Երևան